Բաց դաս

Ապահով համացանց

Դասի նպատակը- ՝Որքան շատ իմանանք այնքան ապահով կլինենք՝

Արմինե Բենիամինյան, Լ. Միրիջանյանի անվան թ155 հիմնական դպրոց

Դասի խնդիրները՝

Կրթական

Համացանցում անհրաժեշտ տեղեկատվության ճիշտ և արդյունավետ որոնում,

Ստացված ինֆորմացիան և գիտելիքները նպատակային կիրառելու հմտությունները

Համացանցի դրական և բացասական կողմերի քննարկումը:

Դաստիարակչական՝

Աշակերտներին զերծ պահել անպարկեշտ և վտանգավոր էջերից: Կարողանալ պահպանել համացանցի անվտանգության կանոնները: Օգտվել "Ապահովության խորհուրդներ"- ից

Անհրաժեշտ սարքավորումներ.

Էլեկտրոնային գրատախտակ, համցանցին միացված համակարգիչ:

Ցուցում՝

Դասարանը բաժանել 2 խմբի, որոնք ունեն "Ապահով" և "Համացանց" անվանումները:

Դասի պլան

1. Նախապատրաստական մաս, դասի նպատակի ներկայացում- 2 րոպե

2. "Ապահով" և "Համացանց" խմբերի ավագները իրենց խմբերին համահունչ անուններով կազմում են ապահով համացանցի յուրօրինակ մոդել: 2x5 – 10ր.

3. Ավագների կողմից սահիկահանդեսների ներկայացումը: 2x9-18ր.

4. Խմբի ավագները հարցերով կստուգեն հակառակ խմբի անդամների գիտելիքները, խաղի միջոցով: 2x6-12ր.

5. Դասի ամփոփում և նշանաբանի ներկայացում - 2րոպե:

Դասի ընթացքը

1. Նախապատրաստական մաս, դասի նպատակի ներկայացումը-2 րոպե

Իր ծավալով, բազմազանությամբ և լայն հնարավորություններով մեկտեղ համացանցը ողողված է նաև բազմաթիվ վտանգներով՝ հատկապես երեխաների համար:

Այդ վտանգներից զերծ մնալու միակ տարբերակը ինֆորմացված և գիտելիքներով զինված լինելն է, որի համար էլ շատ է կարևորվում այս բաց դասը: Վերջինս մի փոքրիկ ինֆորմացիա է հսկա օվկիանոսում:

2. “Ապահով” և “Համացանց” մոդելի ներկայացումը: 2x5 – 10ր.

Սկիզբ

Անի – Բարև ձեզ ես ապահովն եմ

Վարդուհի - իսկ ես համացանցը

Դասարան- մենք ապահով համացանցն ենք:

Միասին-այսուհետ մենք կլինենք ապահով համացանցի խորհրդանիշները մեր դպրոցում:

Մենք ունենք շատ ընկերներ, համախոհներ և զրուցակիցներ:

Համացանց

1. Դրանք իմ սիրած խաղերն են, - Սուրեն

2. Ո՛չ, ո՛չ դրանք իմ սոցիալական կայքերն են, որտեղ իմ ընտանիքի բոլոր անդամներն են, իմ ծանոթ ու անծանոթ հրաշալի ընկերները: - Գ. Նարեկ

3. Մի խաբեք, հա՜ դա կրթական կայքերի հսկայական բազա է, որտեղ ես սովորում եմ օր ու գիշեր:- Էրիկ

4. Ոչ դրանք իմ սիրելի տատիկն ու պապիկն են, որոնք ապրում են ԱՄՆ-ում, և ես նրանց համացանցի միջոցով եմ տեսնում: - Մարիա

5. Է՛հ, էլի չխոսեցինք բլոգերի մասին, դրանք խմբագրման և գրառումների համար շատ հարմար են: Լինում են տարբեր թեմաներով՝ նորաձևության և առողջ ապրելակերպի մասին, խոհարարական և հրաշալի կրթական բլոգեր: - Մերի

6. Բա՜ ֆորումները : Այստեղ տարբեր զրույցներ և քննարկումներ են կազմակերպվում շատ թեմաներով: Շփումն ավելի հետաքրքիր դարձնելու համար: - Կ. Անի

7. Մոռացանք էլեկտրոնային փոստի մասին: Ես ամեն օր նամակներ եմ գրում ու ստանում, որոնց բոլոր գաղտնիքները, այս ցանցում են: - Հովհաննես

Իսկ ինչ է համացանցը իրականում այն տեղեկույթի հսկայական ցանց է , որից օգտվում են տարբեր տարիքի ու սեռի մարդիկ: Այստեղ կա տեղեկատվություն աշխարհում կատարվող բոլոր երևույթների մասին: Կան խաղեր, երաժշտություն, զրուցարաններ և այլն:

Ապահով

1.Այդ ամենը ճիշտ է և հետաքրքիր, սակայն պետք է զգույշ վարվել ու հետևել մի քանի կանոնների, որպեսզի անախորժությունների մեջ չընկնենք: - Անի

2.Երբ օգտագործում ես ինտերնետը հարգիր նրա կանոնները՝ տանը, դպրոցում և ընկերների շրջապատում: -Ռուզաննա

3.Ծնողներիդ ցույց տուր ինտերնետային բովանդակությունը, որը տեսնելիս անհարմար ես զգում: -Գևորգ

4.Ազնիվ և բարեկանաբար վարվիր ուրիշ մարդկանց հետ ինտերնետ ցանցում: -Տիգրան

5.Երբեք մի պատասխանիր անծանոթ նամակներին: -Աննա

6.Երբեք մի հանդիպիր քո ինտերնետային ընկերոջը, առանց ծնողներին տեղյակ պահելու:-Վալենտինա

7.Ուշադիր եղիր, թե ում հետ ես շփվում: -Տիգրան

8.Քո գաղտնաբառը գաղտնիք է բոլորի համար, երբեմն փոխիր այն: -Քրիստինա

3.Ավագների կողմից սալիկահանդեսների ներկայացումը: 2x9-18ր. Կից կներկայացվեն սահիկահանդեսները:

4. Խմբի ավագները հարցերով կստուգեն հակառակ խմբի անդամների գիտելիքները, խաղի միջոցով: 2x6-12ր.

Խաղի էությունը կայանում է հետևյալում՝ հակառակ խմբի ավագը հարցը ներկայացնելուց հետո, խմբից ընտրում է պատասխանող անդամին գնդակի նետման միջոցով,պատասխանում է նա ով առաջինն է բռնում գնդակը՝ և այսպես շարունակ:

5. Դասի ամփոփում և նշանաբանի ներկայացում- 2րոպե:

Օգտագործենք համացանցը խելամիտ,արդյունավետ և միմիայն բարի գործերի համար:

Մենք կարող ենք լինել խոհեմ և տարբերակել, որն է լավը և, որն է վատը:

Safe.am

BLOG

BLOG
FORUM




BLOG
FORUM
BLOG

ՀԱՄԱՑԱՆՑ


Անվտանգության խորհուրդներ
Մի վստահիր այն ամենին, ինչ ասում են քեզ այլ մարդիկ, նրանք կարող են կեղծ լուսանկարներ օգտագործել, կամ ստել: